անձնավորությունները, հոգևորականներն ու նրանց զավակները, ինչպես և իբրև առևտրական ցուցակագրվածները, եթե նրանք ապրում էին գյուղում։ Գյուղը ստանում էր համադասակարգային[23] բնույթ։ Այդ պատճառով գյուղական հասարակությունն իրավացի էր համարում այդպիսիներին ընդհանուր հողից բաժին հանելը, սակայն և դիմադրում էր, երբ դրանք իրենց դասակարգային առանձնաշնորհումներից օգտվելով, խույս էին տալիս գյուղի վրա ընկնող տուրքերի վճարմանը մասնակցելուց և հասարակական պարտականությունների կատարումից։

«2. Հասարակության ոչ անդամ մեկը, այլ վերաբնակվածը պսակվելով մեռած տանտիրոջ ժառանգ աղջկա հետ՝ դառնում էր հասարակության անդամ և բաժին էր ստանում հասարակական հողերից։

«3. Չկար հողի հարկադրական մշակում, բայց եթե մեկն իր հողաբաժինն անմշակ էր թողնում երկար ժամանակ և չէր օգտագործում, մեկ ուրիշը, ով որ շուտ հասներ, իրավունք ուներ այդ հողը վարելու և իր օգտին ցանելու։

«4. Ոչ ոքի արգելված չէր անասունն արածացնել արտամիջի սահմանահողերում[24] և անցնել ուրիշի հողաբաժնով։

«5. Արտը հնձելուց և խոտը հավաքելուց հետո վարելահողը և խոտհարքի տեղն անցնում էին ընդհանուր օգտագործման, և ոչ ոք իրավունք չուներ արգելելու անասունն արածացնել այդ հողաբաժինների վրա։

«6. Հասարակության բոլոր անդամներն իրավունք ունեին ազատ քաղելու և հավաքելու ցանած արտերում ամեն տեսակ վայրի բույս՝ ուտելու կամ այլ տեսակ տնտեսական պետքերի համար։

«7. Աստվածահաճո գործ էր համարվում թույլ տալ չքավոր համագյուղացիներին հավաքել հնձած արտերում մնացած հասկերը։ Ուզ գյուղում արգելվում էր այդպիսի արտերում արածացնել հնձից հետո երկու ամսվա ընթացքում, որպեսզի չքավորները հնարավորություն ունենան իրենց օգտին հավաքելու թափած հասկերը կամ, ինչպես տեղացիք են ասում՝ պաշար անելու։

«8. Պատրաստի խուրձեր գողանալը պատժվում էր, բայց ոչ ոքի չէր արգելվում ուտելու համար հավաքել կիսահաս հասկերը՝ հէղինը։

«9. Սվաղի համար գործածվող սպիտակ կավը, գետի ավազը, ներկատու և բրուտային կավը, կրաքարը, շենքերի քարը և գիպսը հասարակության սեփականությունն էր համարվում, թեկուզ դրանք լինեին առանձին տնատերերի հողերում։

«10. Ամեն մեկն իրավունք ուներ ազատ օգտվելու ճահիճների վրա և գետերի ափերին բուսնող եղեգնից։ Ոչ ոքի չէր արգելվում գետի մեջ ձուկ որսալ և անտառում որսորդություն անել։

«11. Այն տեղերում, որտեղ հողերը ջրովի էին, գոյություն չուներ ջրի սեփականություն։ Հասարակության բոլոր անդամներն իրավունք ունեին օգտվելու ջրից, թեկուզ մասնակցած չլինեին առուներ անցկացնելու աշխատանքներին։

«12. Հասարակությունն իրավունք ուներ նոր առուներ անցկացնել ամեն տեղով, առանց հողատիրոջ համաձայնությունը հարցնելու։

---

[23] «Всесословный». *Егиазаров С. А.*, Сельская община в Елисаветпольской и Бакинской губерниях. «Свод материалов по изучению экономического быта госуд. крестьян Закавказского края», т. III, ч. 2-ая, *էջ 1։*

[24] Межи.